



Պաշտոնաթիւր ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿԿԱԿԱՆ

ՄԱՐՏ 23, 2025

Թ. Տարի, թիւ 12 (417) (Եղբ Շրջան), Հիմնուած 1899-ին, իբրև «Զայն Հայրենեաց»

ՀԱՅՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԱԽԱՏՈՒԵՅ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒԹ ԽՈՐՀՈՒ ԺՈՂՈՎԸ

Մարտի 11-14-ը Մայր Աքոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ա.Օ.Ս.Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կարողիկոսի նախազահութեամբ, տեղի ունեցած Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովը:

Ժողովն ատենապետեց Կ. Պոլիկ Հայոց Պատրիարք Ամենապատի Տ. Սահակ Արքեպահսկոպս Մաշալեանը, իսկ նիստերը վարեց Մայր Աքոռ Սուրբ Էջմիածնի դիացիանապետ Տ. Արշակ Արքեպահսկոպս Խաչատրեամը:

(Ժար. ը տեսնել էջ 9)

### ԱՌՈՂՋԻ ՄԵՐԵՑՄԱՆ ԿԵԴՐՈՆԵՆ ՆԵՐՄ ՆՀՈՒԵՑՄ

### ԱՐՃԱԿ ԶՈՂԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ



Ուրբար, 14 Մարտի երեկոն կը մնայ անմոռանալի յիշատակներով, եւ հոգ քաղմութեամբ լցուն հանդիսութիւն մը, օրինութեամբ Գանատայի Հայոց Առաջնորդ Արքար Եպս. Յովակիմեանի, բարձր ներկայութեամբը Թ.Ս.Ս. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Դոկտ. Արշավիր Կէօնճեանի եւ մասնակցութեամբ գաղափարակից հարազատներու եւ բարեկամներու, որոնք եկած էին յարգանքի անսակարկ տուրքը տալու մեծ հայուն ու հայրենասէրին՝ Արշակ Չօպանեանին:

Այս առջի յատկապէն Նիւ Եղբէն հրամակուած էր բանախօսելու «Պայքար» շաբարաբերի գործադիր խմբագիր Յակոր Վարդիկանան: Գործադրուեաւ որակաւոր մշակութային յայտագիր մը:

Կարդալ այս թիի էջ 6-ին մէջ լրս տեսնոն հանդիսութեան նկարագրականը:

### Նիւ Ծորովի

### ԹԵՔԵԵՄ ՄՇԱԿ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵԾՆ. ՆԻՒ ԵՈՐՔԻ «ՄՐԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՈՒՆԵՑՄԱ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՒԿԱՔԸ ԻՐ ՆՈՐ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԵԶ

Ծարար, 15 Մարտի երեկոն Թատերախումբի ընտանիքին անդամներուն համար եղաւ յիշատակելի օր մը: Արդարեւ, քանի մը ամիսներու բացակայութենի ետք, շնորհի Թ.Ս.Ս. Կեդրոնական Վարչութեան, մասնաճիւղն ու բատերախումբը վերադարձան իրենց նոր հաւաքավայրը: Զգալի էր ներկաներուն երջանկութիւնը, որով բատերախումբը պիտի շարունակէ իր առաքելութիւնը, որ ծնունդ առած է 1979-ին:



Արդէն ծրագրուած է յառաջիկայ բեմադրութիւնը՝ Անտոն Զեխովի «Ամուսնութեան առաջարկ»-ը, որ թեմ պիտի բարձրանայ 10 Մայիսին: Կը ծրագրուած նաև աշնան ներկայացնել բատերախումբի մեծ բատերախաղ մը:

Նկարին մէջ անդամները շրջապատած են բատերախումբի հիմնադիր առենապետը Յակոր Վարդիկանան ու բեմադրիչը՝ Յարութ Չարմաճեանը:

### ԱՅՍ ԹԻՒՌՎ ԿԱՐԴԱՆ


Լոյով ուղեկցուող խօսքը	Էջ 2
Փիսուոր ԾՊԱԶՎԱՌՈՒԹԵՐՆ Եւ ՀԵՏԵԽԱԾԵՐ	Էջ 3
ԽՈԽՈՎՎԱՆՈՒԹԵՐՆ	Էջ 4
ՄԵՐ «ՊԱՇԵԱՎԻՇ» ՈՈԽԱՍԱՍՆ...	Էջ 4
ԶԱՒՆ ՍՍԵՐԼԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՔԵՐՆ ՀԱՍԱՐ» ԱՆԳԼԵՐԵՆ ՀԱՏՈՐ	Էջ 5
ԱՐԵԱԿ ՅՈՊԱՆԵԱՆԻ ՅԻԿԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՍԻՐԵՒՆ	Էջ 6
«ՄԻԱՅ ԹԱՏՐՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ ՇԵ...»	Էջ 7
ԼՈՒՄՐԵՎԱԿ ՄԵ Զ. ԴՐՈՒ ՀԱՅՈՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵ ԲԱՅՈՒ ՅԻՄՈՒ ԵՐԻՄԾՈՒՄ ԱՐԵՍԵ	Էջ 8
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵ ԲԱՅՈՒ ՅԻՄՈՒ ԵՐԻՄԾՈՒՄ ԱՐԵՍԵ	Էջ 9

### ՊՆՈՐՈՇ ՄՏԱՀՈԳԻՉ ԴԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԻՆՔՆԻՆ ԻՐԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՐԱԾԽԻԲ ՉԷ

ՌՈԿ. ԱՐԵԱՐԻՐ ԿԵԾԱԾԱՆ  
Order of Canada շքանշանակիր

Հայաստանի իշխանութիւնները այս օրերուն մեծ ակնկալութիւններ կ'ուզեն վերագրել այն տեղեկատուուրեան թէ Ասորպէյէճանի հետ «Խաղաղութեան Պայմանագրի» շարադրութիւնը վերջնականացած է:

Արդարեւ, քառասուն շրու օրեայ տիսրահոչակ պարտութեամբ աւարտած պատերազմէն ետք, անցեալ չորս տարիներու ընթացքին, Հայաստանի իշխանութիւնը իրերի իր ռազմաքաղաքական գլխաւոր նախատական կը հետապնդէ, գոնի իր տեսլականով, Հայաստանին համար խաղաղ եւ հանգիստ շրջան մը պահունակէլու երաշխիք տալիք, Ասորպէյէճանի հետ՝ այսպէս կոչուած «Խաղաղութեան դաշնագրի» մը ստորագրութիւնը:



Այդ շրու տարիներու ընթացքին, վարչապետ Փաշինեան եւ ՔՊ-ական իր գլխաւոր գործակիցները առանց յուսահատելու ամէն առիթ օգտագործեցին հասնելու համար այս դաշնագրի վերջնականացման: Միւս կողմէ սակայն, ընդհակառակը այս ամբողջ տեսլութեան, պատերազմի յաջողութենէն զինված ինքնավաստան Ասորպէյէճանը, շարունակարար ցուցադրեց ամբարտաւան եւ արտառոց պահանջներ եւ պայմաններ ուղղուած ուղղուած հայաստանին իր բոլոր արտայայտութեանց ընթացքին:

Այս սանձարձակ ամբարտաւանութեան գագաթնակէտը կը կայանայ տակալին մինչեւ այսօր՝ Ասորպէյէճանի պետական բարձրագործ դիրքերու վրայ գտնուող անձնատրութեանց կողմէ ամբողջ Հայաստանը «Արեւմտեան Ասորպէյէճան» անուանելու:

Այս պայմաններուն տակ է, որ անցնող օրերու ընթացքին, Հայաստանի մէջ եւ ապա միջազգային մամուլին մէջ յանկարծ տարածուեցաւ լուրը թէ Հայաստան եւ Ասորպէյէճան համաձայնած են «Խաղաղութեան Պայմանագրին» պարունակութեան բոլոր կէտերուն շուրջ: Յատկանշական է սակայն որ մինչ Հայաստանի իշխանութիւնները կը զանան այս պարագան ներկայացնելու որպէս կարենու իրագործում մը, եւ նոյնպէս ալ, մինչ Եւրոպական, Ամերիկան եւ մերձակայ երկիրները եւս, լաւատեսութեամբ կ'արձագանքնեն այս լուրին, միս կողմէ սակայն, պայմանագրին ստորագրութեան վայրին եւ բոլոր առաջարկան մասին ոչ միայն մինչեւ օրս կայ որեւէ տեղեկութիւն, այլ մանաւանդ նոյն ինքը, Ասորպէյէճանը ոչ մէկ կերպ կ'անդրադառնայ այդ նիւթին: Առաւել եւս, տակաւին ամէն օր Ալիւ կ'արտայայտուի Հայաստանն նոր զինուներ պահանջնելու լեզուով:

Այս բոլորին առջն, բոլորովին հասկնալի է թէ նոյն ինքը հայրենաբնակ հայ ժողովուրդին խոշոր մէծամասնութիւնը նտահոն եւ թերահաւատ է: Աւելին եւս, յունտեսութեամբ անոնք կը սպասեան որ նախ իրազեկ դառնան շեփորուած այս պայմանագրին ամբողջական բովանդակութեան:

Սփիտքը իր կարգին՝ կը բաժնէ ընդհանրապէս հայրենի ժողովուրդին, նկատի ունենալով այսօրուան իշխանութեան, այլեւ մինչեւ այսօր բազմից դրսեւրած, պարտուղական զինուներուն երալու զորեւութիւնը:

Ահա այս պայմաններուն մէջ է որ հասկնալի է թէ ի պատասխան մեզի ուղղուած հարցուներուն եւ մեզմէ ակնկալուած այս կապակցութեամբ մեր կեցուածքը բացայացնելու պահանջներուն, մենք որպէս գլխաւոր հայեր, իմնութիւնը կ'անդրադառնայ այս պայմանագրին» մասին մինչեւ այսօր ընդհանութիւն հասնելի անկատար տուեալներուն վրայ, մենք եւս կ'արտայայտներ մեր մտահոգութիւնը եւ առայժմ յունտեսութիւնը:

Այս մտահոգութիւնը եւ յունտեսութիւնը հիմնաւորուած են մանաւանդ առարկայական լրջագոյն մէկ մէծ հիմնական, բացայայտ բացուողումն մը վրայ՝ որ մինչեւ այսօր, չորս տարիներ ետք, տակաւին ակնյայտ բացայացնելու պահուածութեան, որ վատահելի կարեւորագոյն երաշխիքը պիտի լրջագոյն մը իսկական տոկունութեան եւ հետեւարար անուանական արժեքին:

Արդարեւ պատմութիւնը բազմից ցոյց տուած է թէ ամէն ժամանակներու ամէն վայրեկու մէջ որեւէ երկրի մը համար խաղաղութեան ամէն ապահով երաշխիքը անոր կատարեալ պատրաստութիւնն է իր սեփական ոյժերով ու առաջնագրին մը իսկական տոկունութեան եւ հետեւարար անոր իսկական արժեքին:

Այս պատրաստութեան բացայացնելու պայմաններուն մէջ, դժբախտաւար բուլը եւ ստորագրութիւն կ'արժեն միայն այնքան, որքան կ'արժեն այդ բուլը եւ այդ ստորագրութեան մելանը:

Սոնակալաւ

# Լոյսով ուղեկցող հօսք՝ ՄԻՇ ԶԵ, որ դիմուն է ըսկալիում

Ծառին կեամբ երաշխատում են նրա խոր արմատները և ոչ երբեք  
ճիշտերն ու տերեւները:

Սեր մեծերից շատերն են ասել, որ մեր ծառն առողջ է և կը մնայ առողջ,  
եթե պրկունք ազգովին եւ յաճախ կտրատենք չորով ճիշտերը: Այս, չայ ժո-  
ղովուրդը, որ միշտ կարող է եւ պիտի յաղթի, առայժմ դեռ պարտում է: Արդէն  
120 տարի է պարտում ենք ու ամէն անգամ յատկապէս ազահ թալանշիների  
պատճառով: Տեսէր ովքեր են մեզ յաղթում: Խսկ դա այն  
պարզ պատճառով, որ այդպէս էլ չուտեսանք նոյնին դեկավարները: Հակառակ  
դէպքում մերը կը լինէին Վաճար, Սարրդամըշ, Կարսը, Նախշեանը, Եղունի  
համար արդէն դատի տուած եւ պատախանատութեան ենթարկած կը լինէ-  
ինք Թորքիային, չինք յանձնի Արցախը: Այդ ժամանակ Հայաստանը ոչնչով  
չէր զիջի ոչ Սինկափորին եւ ոչ էլ Շուէցարիային: Սակայն ցան այն է, որ թէ-  
եւ անկախացանք, սակայն այդպէս էլ ազգի մակարդակը Խորհրդային կաղա-  
պարներից դուրս չեկա, չձերքազատուց հյու ենթարկուողի հոգեկերտուածքից: Այս  
ցախ իմմանիդը Տէր-Պետրոսեանի շանքերով ստացուել է մի իրավիճակ,  
երբ մարդիկ ուղղակի իրար չեն սիրում այն աստիճան, որ «Մի կարի մեղի»  
համար իրար են սպաննում: Պատմահայր Խորենացին եթէ այսօր ապրէ,  
վստահ եմ, մի ամբողջ հատոր ողբ կը գրէ:

## Մեսք Մեր Արքութեանսերու



Հիմնաւոր Սեւանայ վաճրին մէջ կանգնած է ուշազրա մը, որ  
կը տարբեր բոլոր մեր խաչքարերէն: Մեր խաչքարերու մեծ մասին վրայ  
Քրիստոս Խաչին զամուած չէ պատկերուած, քանի որ մեր հաւատքը Խաչէ-  
լորեամբ չաւարտիր: Մենք կը քարոզենք յարուցեալ Քրիստոսը, յարթական  
Թագավորը: Սակայն այս խաչքարը, որ բուազրուած է 13-րդ դարով<sup>(\*)</sup>, բոլո-  
րովին այլ է:

Խաչքարի կելորնը փորազրուած է խաչուած Յիսուսը: Խսկ վարը պատ-  
կերուած է դժոխք իշմելու՝ այն պահը, երբ Քրիստոս իր գօրութեամբ ու փառ-  
քով կ'աւերէ դժոխքի դրսելը, որպէսզի ազատ գերութեան մէջ գտնուողները: Այս  
կը յիշեցնէ, սիրելիներ, որ նոյնիսկ այն ժամանակ, երբ կը բուար, թէ  
ամէն ինչ կորսուած է, Աստուած յարթանակ կը պարգևէ:

Բայց կայ բան մը եւ, որ այս խաչքարը կը դարձնէ խաչապէս բացառիկ: Քրիստոսի դէմքը կը տարբերի սովորական պատկերներէն: Ան նման է 13-րդ  
դարու մոնղոլներուն՝ երկար հիսած մազերով, ծիշդ այնպէս, ինչպէս այն  
ժամանակ Հայաստան ներխուժած մոնղոլ զօրականները: Պատմաբանները  
կ'ըստն, որ այս սանտրուածքը եկած է Չինաստանի խիստաններէն եւ կը  
կոչուի Քունչա:

Հիմա հարց. ինչո՞ւ մեր նախնիները այսպիսի խաչքար փորազրած են: Ինչո՞ւ Յիսուսին այս կերպ ներկայացուցած են: Որովհետեւ մեր նախնինե-  
րը քաջարար կառչած են իրենց հաւատքին: Անոնք չէին պահութեր վախի  
մէջ, այլ կը քարոզէն Քրիստոսի Աւետարանը: Անոնք այս խաչքարը օգ-  
տագրծած են որպէս գործիք, որպէսզի Յիսուսը ներկայացնեն մոնղոլնե-  
րուն՝ այնպէս, որ վերջիններս կարողանան իրենց տեսնել Քրիստոսի մէջ: Ա-  
նոնք իրենց նուածողներուն կ'ըստին. «Յիսուսը Քրիստոսը նաև ծեր Փրկիչն է»:

Այսօր մենք այս կը կոչենք մշակութային համադրում—երբ Յիսուս կը  
պատկերուի տարբեր մշակոյներու մու քորվես հայ, ափրիկնեց, ասիացի,  
հնդիկ: Բայց մտածեցէք—մեր նախնիները այս մեկը կ'ընէին ինուս 13-րդ  
դարուն: Այս է մեր հաւատքի կուրինը: Պոլոս Առաքեալ կ'ըսէ՝ «Ամէնքին  
հետ եղայ ամէն ինչ, որպէսզի թերեւս փրկեան ունաց» (Ա. Կորնթացիներ 9:22): Ահա թէ ինչ կ'ընէին մեր հայրերը: Անոնք չէին սպասեր, որ մոնղոլները  
զային դէպի Քրիստոս, այլ Քրիստոսը կը տանէին անոնք:

Սեւրուա եպիսկոպոս Պարսամեան  
Նիւ Եղուր


<sup>(\*)</sup> 1653 բուազրին խաչքարի վրայ գրութիւն մը աւելցուցած են, ընձայե-  
լով այն Հայրապէս արքեախիսկոպոսին: Սակայն ակնայտ է, որ ասիկա հե-  
տազայ յաւելում է եւ չէ եղած բուազրի քանդակագործին կողմէ:

### Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

ՍՈՒՐԵՆ Շ. ՍՄՐԳՄԵԱՆ  
ՊԳԴ, փողքէոր

Ուժրանիայի դէմ Ամերիկայի քայլերից յետոյ, աշխարհի իին կարգերը քանդր-  
ում են, այն այլեւս, առաջուանը չի լինելու: Մենք, հայերս, պէտք է սրափնունը  
եւ առանց ուսուի ու թուրքի անկախ ու պատազա գնացող ճանապարհը բռնենք: Մէկնդիշտ ըմբռնենք, որ սովոր գոյութիւն ունի ոչ թէ այն պատճառով, որ մենք  
չենք կարող կերպերի աղքատներին, այլ որովհետեւ չենք կարող հարստանե-  
րին կշտացնեն: Հայրենի պատմութեան ինացութիւնը ազգային ինքնուրեան բա-  
ղադրիչ է եւ այն ուղղակի պարտաւում են այն առաջարկան:

Ուժրանիայի դէմ Ամերիկայի քայլերից յետոյ, աշխարհի իին կարգերը քանդր-  
ում են այլեւս, առաջուանը չի լինելու: Մենք, հայերս, պէտք է սրափնունը  
եւ առանց ուսուի ու թուրքի անկախ ու պատազա գնացող ճանապարհը բռնենք: Մէկնդիշտ ըմբռնենք, որ սովոր գոյութիւն ունի ոչ թէ այն պատճառով, որ մենք  
չենք կարող կերպերի աղքատներին, այլ որովհետեւ չենք կարող հարստանե-  
րին կշտացնեն: Հայրենի պատմութեան ինացութիւնը ազգային ինքնուրեան բա-  
ղադրիչ է եւ այն ուղղակի պարտաւում են այն առաջարկան:



Այդ ժամանակից ի վեր մարդիկ յաճախ «սուտը» ընկալում ու ներկայացնում են որպէս «ճշմարտութիւն»: Խսկ մերկ «ճշմար-  
տութիւնը», «ստի» փոխարէն, ամօրի է մատնում բոլորի կողմից: Արդ ճեւա-  
տրուող նոր աշխարհակարգի պայմաններում այնքան խելացի պիտի լինենք,  
որ կարողանանք սուտն ու ճշմարտութիւնն իրարից զատել: Յետոյ էլ հասկա-  
նանք վերջապէս, որ XX և XXI դարերում քայցը սուտը դառը ճշմարտութիւ-  
նից ծանր է կշռում այնպէս, ինչպէս նաւոր՝ արինից:

Հասել ենք մի համգրուանի, որ Արտայէճանի նախազահի խորհրդական Հա-  
ճինը, որպէս ապացոյց, որ Հայաստանը իրականում խաղաղութիւն է ցանկա-  
նում, պահանջում է Արտայէճանին յանձնել «ռազմական յանցազործներին»: Աւելին, նրանց յայտնաբերելու գործում հայկական կողմից համագործակցու-  
թիւն է ակնկալում: Մտովի հաշուեցի, թէ մօտաւորապէս Հայաստանի եւ Ար-  
ցախի Հանրապետութիւնների նախկին քաղաքացներից քանի մարդ կարող է ընդդրկուել այդ ցուցակում: Եթէ Արտայէճանի ներկայ իշխանութիւնների պատ-  
կերացումներն ու իրաւաբանական մօտեցումներից ելնենք, կը ստացուի, որ  
«պատրերազմի յանցազործներ» հասկացութեան մէջ կարող են յայտնուել մօս  
կէս միին ՀՀ քաղաքացիներ: Դրանց մէջ կը մտնեն անցած 28-30 տարում ՀՀ  
եւ ԼՂՀ քանակներում ծառայած բոլոր զինուորականները, ԼՂՀ պետական  
մարմիններում աշխատաները, ԼՂՀ այցելած եւ նրա տարածքում ինչ որ  
ժամանակ գտնուածները, քանի նրանք չեն ունեցել Արտայէճանի սահմանը  
հատելու բոլուսութիւն եւ այլն: Այս ցանկը կարելի է շատ երկար շարունակել:

Հասել ենք մի համգրուանի, որ Արտայէճան նախազահի խորհրդական Հա-  
ճինը, որպէս ապացոյց, որ Հայաստանը իրականում խաղաղութիւն է ցանկա-  
նում, պահանջում է Արտայէճանին յանձնել «ռազմական յանցազործներին»: Աւելին, նրանց յայտնաբերելու գործում հայկական կողմից համագործակցու-  
թիւն է ակնկալում: Մտովի հաշուեցի, թէ մօտաւորապէս Հայաստանի եւ Ար-  
ցախի Հանրապետութիւնների նախկին քաղաքացներից քանի մարդ կարող է ընդդրկուել այդ ցուցակում: Եթէ Արտայէճանի ներկայ իշխանութիւնների պատ-  
կերացումներն ու իրաւաբանական մօտեցումներից ելնենք, կը ստացուի, որ  
«պատրերազմի յանցազործներ» հասկացութեան մէջ կարող են յայտնուել մօս  
կէս միին ՀՀ քաղաքացիներ: Դրանց մէջ կը մտնեն անցած 28-30 տարում ՀՀ  
եւ ԼՂՀ քանակներում ծառայած բոլոր զինուորականները, ԼՂՀ պետական  
մարմիններում աշխատաները, ԼՂՀ այցելած եւ նրա տարածքում ինչ որ  
ժամանակ գտնուածները, քանի նրանք չեն ունեցել Արտայէճանի սահմանը  
հատելու բոլուսութիւն, եւ շատ լուրջ են այն առաջարկան:

(Ծար. ստենել էջ 11)

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԽԱՄԱԿԱՐԳՈՒ՝ Պոկտ. Արշակիր ԿԵՆԵՆԵԱՆ (ՄՈՆԹՐԵԱԼ)

ԳՈՐԾՈՒԹԻՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Յակով Վարդիվառեան (Նիւ Հըրզի)

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՋՄ

Յակով Աւետիքեան	(Երեւան)


<tbl\_r cells="2

# Քաղաքական Շենքի Հարթակ

# ՓՈԽՈՒԹՅԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

Վերջին օրերուն, Միջին Արեւելք, Երովան եւ ԱՄՆ ականատես կը դառնանքաղաքական հոլովոյթի մը որու կեղրոնն է Ուրբանիոյ մէջ տեղի ունեցող պատերազմին դադրեցումը եւ Միջին Արեւելքի մէջ Սուրխոյ տագնապին հակակցուումը, Երովայի մէջ երեւցող քաղաքական նոր հոսանքները եւ մշակութային համաշխարհայնացումն ու ցեղապաշտութիւնը հիմքերն են մեր այս քաղաքական յօդուածին: Իրականութիւնը գիտնալը պիտի փրկէ մեր ազգը: Իրականութիւնը գիտնալը յստակ վերլուծումի միջոցով մեզ կը փրկէ անորոշութենէն ու կը դարձնէ տեղեակ ու որոշում կայացնելու պատրաստ ազգ:

## Թուրքիա ժխտական գործուն

Սուրբ Առաքելական պատրիարքի մէջ տեղի ունեցող դէպքերը կը կրեն Թուրքիոյ ժխտական ազդեցութեան հետեւանքները: Թուրքիա ամէն ձեռվագ փորձեց օգտուիլ իր իշխանութեան հասզուած սալաֆական և իխուանական վարչակարգին զոյտրենեն:



սակայն, իր դեմ գտաւ խրայէլեան, ոռւսական եւ ամերիկեան գործօնները: Խրայէլ նկատելով Թուրքիոյ հզօրացումը ու Սուրբոյ մէջ խարիսխներ հաստատելու ծրագիրը, դիմեց Ռուսիոյ եւ անկէ պահանջեց շինուանալ երկրեն: Ռուսիա որպէս լծակ պիտի օգտագործող Խրայէլի կողմէ հակակշռելու համար թրքական օրուայր ներկայութիւնը: Այս է պատճառը նաև որ Շարաահի վարչակարգը չպահանջեց ոռւսերէն հեռանալ երկրեն: Ռուսիա նաև արգելը հանդիսացաւ Թուրքիոյ եւ Միացեալ թագաւորութեան սարքած այն սպանութիւնը որուն զոհ գացին հազարաւոր ալեւիներ Լարաքիոյ եւ Թարքուսի մէջ: Հիմնական նպատակը ոռւսական ներկայութեան չէզորացումն է այս շրջանին մէջ: Ալեւիներ ապաստանեցան Հրմէյիմին ոռւսական խարիսխը խուսափելու համար սպանութիւն: Միւս կողմէ, դարձեալ նուազեցնելու համար թրքական ազդեցութիւնը ԱՄՆ հաշտեցուց թիւրտերը եւ Շարաահի վարչակարգը: Համաձայնագիրը որ կնքուեցաւ երկու կողմերուն միջեւ կը պարունակէ լաւ կէտեր ու ապագային կրնայ վերածուիլ Սուրբոյ նոր սահմանադրութեան: Սահմանադրութիւնը որ պիտի պաշտպանէ երկրի բաղկացուցիչ բոլոր համայնքները եւ ազգութիւնները ու զանոնք պիտի դարձնէ երկրի խսկական զաւակներ հաւասար օրէնքի: Եւ պատասխանատութեան առջեւ: Ուրեմն, ինչպէս կը տեսնենք Թուրքիոյ առաջին խանդապառութիւնը մարեցաւ Ռուսիոյ, Խրայէլի եւ ԱՄՆ-ի միջամբ-տուրքեան պատճառով: Բնորն ալ հասկցան թէ Թուրքիա կը համարուի ժխտական գործօն Սուրբոյ մէջ:

Նախագահ Էրտողանի վարչակարգը կը դիմագրաւէ տնտեսական տագնապքարձր սղաճին պատճառով: Մարդոց աշխատավարձը կը բաւէ միայն մինչեւ 20 օր սղութեան պատճառով: Ընդդիմադիր Cumhuriyet Halk Partisi-ի ղեկավարներէն Պալոյ քաղաքապետ Խմանօղլու ձեռնոց կը նետէ նախագահին ու սկսած է բողոքի մեծ շարժում: Ի՞նչ պիտի ընէ Էրտողան այս բողոքը դիմագրաւելու համար անկանխատեսելի է, սակայն քրտական եւ հայկական գործօնները օգտագործելը հեռու չէ իրականութենէն: Այս է պատճար որ վերլուծողներ կը վախճան քրդական քայլէ մը Հայաստանի դէմ, օգտագործելով Ատրպանի կողմէ յառաջ քաշուած այն թեզը թէ Հայաստան կրնայ յարձակիլ Արցախին վերատիրանալու համար: Քիւրտ ղեկավար Օճալանի խաղաղասիրական յայտարարութեան ժամանակաւորումն ալ անմեղ չէ: Էրտողան կ'ուզէ օգտուիլ ամէն առիթ պահելու համար իր «Փալամ եղբայրներ»ու վարչակարգը:

## Մշակութային համաշխարհայնացում

1980-ական թուականներուն եւ անկէ շատ առաջ Արեւմուտքը եւ Ռուսիան իրենց քաղաքական կշիռը զարգացնելու համար տարբեր երկիրներու մէջ կ'օգտագործէին մշակոյթը որպէս գործիք իրենց յաջողութիւնը ներկայացնելու ու մարդոց միտքը գրաւելու համար: Արեւմուտք օգտագործեց ու տակաւին կ'օգտագործէ «Հողիվուտ»ը, «Ուոլք Տիզնի»ն ու այլ պատկերասփիտի ժապաւեններ ցոյց տալու իր կարողութիւնը բարձրորակ ժապաւեններ արտադրելու համար: «Մթարպար», «Ամազոն», «Սի.Էն.Էն.» ու այլ հարթակներ միջոցներ են Համաշխարհայնացում շարժումին զարկ տալու համար: Եւրոպական տարբեր մշակութային կենորուններ կը սորվեցնեն իրենց լեզուն, մշակոյթը մարդիկ գրաւելու համար: Մարդը սորվել ետք լեզուն կը փափաքի այցելել այդ երկիրը ու գործ հաստատել կամ համալսարանին մէջ ուսանիլ: Ապագային այս մարդը շատ հաւանաբար դառնայ այդ երկիրն ծանուցում կատարողը ու անոր հանդէալ դրական լիցը հաստատողը: Այս է միջոցներէն մէկը որու դիմեցին Արեւմուտքի երկիրներ գաղութատիրութեան աւարտէն ետք նախկին հպատակ երկ-

## ■ Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին |

ՎԻԳԷՆ ԹՈՍՈՒՄԵԱՆ

թին մէջ իրենց համակիր մարդիկ պահելու ու անոնց թիւը բազմացնելու, որ-պէսզի կարենան պահել իրենց ազդեցութեան գօտին այդ պետութեան մէջ։ Նախկին Խորհրդային Սիութիւնն ալ օգտագործեց իր մշակութային կեղուն-ները եւ Համայնավար կուսակցութեան ազդեցութիւնը տարբեր երկիրներու մէջ որպէսզի համակրանքը շահի մաս մը այդ երկիրներու քաղաքացիներէն։ Մշա-կոյթը հզօր գործօն մըն է օգտագործուած տարբեր երկիրներու կողմէ մարդ սիրաշահելու համար։

Անշուշտ այս հոլովոյքը ունի իր ժխտական կրղմը՝ մարդը կը հեռացնէ իր ուրոյն մշակոյքէն ու կը մօտեցնէ Արեւմուտքին կամ Արեւելքին: Շատ անգամ մարդը կը դարձնէ այդ ազդեցիկ երկրի հլու հնագանդ ծառան, հեռու իր ազգային մշակոյքէն, զայն դարձնելով անդէմ անձ մը որ անդամ է միջազգային մշակոյքի մը որ կը կոչուի Համաշխարհայնացում: Ներկայիս Հայաստանի հանրապետութեան մէջ կրօնքի ուսուցումը դադրեցնելը դպրոցական գիրքերէն ու ազգային դաստիարակութեան որոշ չափով նուազումը այս ճակատագրական ժամանակամիջոցին, քայլեր են որոնք հայ մարդը կը հեռացնեն իր ազգային ու կրօնական ակունքներէն: Ակունքներ որոնք հայ ազգին ծառայած են երկար ժամանակ պահելու համար իր մշակոյքը եւ ինքնուրոյն դիմագիծը ժողովուրդներու բազմազգ ընտանիքին մէջ: Հին ժամանակ պարսիկներ, յոյներ, հռոմայեցիներ նաև դիմած են մշակոյքին իրենց դրացի կամ հպատակ երկիրներուն մէջ սիրաշահելու համար քաղաքացիները: Հելլենիզմ շարժումը իրականութեան մէջ համարկումն էր Քանանի, փինիկեցիներու եւ հայերու մշակոյքներուն յունական մշակոյքին հետ: Արդինքն էր Հելլենիզմը որ թէեւ ուներ յունական արմատ, սակայն կը կրէր նաև հայերու եւ փինիկեցիներու մշակոյքի դրոշնը: Սպանացիներ երբ 16-րդ դարուն սկսան իրենց մշակութային արշաւը Հարաւային եւ Կելլրոնական Ամերիկայի ցեղերուն վրայ, նախ իրենց լեզուն ու կրօնքը պարտադրեցին այդ ժողովուրդներուն: Մշակոյքը գրաւեց մարդոց միտքը քաղաքական գրաւումէն առաջ: Որպէս դրական լիցք ունեցող ազգ, մենք ի՞նչ կ'ընենք այս ուղղութեամբ: Ներկայիս ոչ բաւարար աշխատանք: Հայաստանի հանրապետութիւնը ունի հսկայ ներուժ ու տակալին օգտագործած է շատ փոքր համեմատութիւն մը անկէ մարդիկ սիրաշահելու համար: Գիտութիւնը, լեզուն եւ մշակոյքը ազդեցութեան գօտի հաստատելու մեծ գործօններ են: Աշխատանքի լծուելու ժամանակը հասած է արդէն: Մշակութային ազդեցութիւնը նաև երկրի քաղաքական ու ուազմավարական պաշտպանութեան կարեւոր գործօններէն մէկն է:

**ԵՐՊԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՂԺԳԻՒՐԻՒ**

ԱՄՆ-ի նախագահ Տոնիալտ Թրամփի իշխանութեան հասնելէ ետք սկսավ վարել տնտեսական սեղմումի քաղաքականութիւն: Շիշդ ձեւով զնահատելէ ետք երկրի տնտեսական վիճակը որ ցոյց կու տայ անկումի նշաններ, պետական պարտքի չափին, վարկի տոկոսի ու մանաւանդ բարձր սղածին պատճառներով, ան որոշեց նուազեցնել ԱՄՆ-ի օժանդակութիւնը տրուած Ուրբանիոյ եւ Ատլանտեան Ուխտին: ԱՄՆ ըլլալով ամենամեծ օժանդակողը, երպական երկիրներ աղմուկ բարձրացուցին, թէ այս ձեւով Ուրբանիա պիտի պարտուի ու Ռուսիա պիտի ապահովէ մեծ յաղթանակ, վտանգելով Երոպայի ապագան: Նախագահ Թրամփի իր այս քաղաքականութիւնը պարտադրելու համար դիմեց Ուրբանիոյ, որ տրուած պարտքի դիմաց իրեն յատկացնել երկրի սուլ մետաղներու հանքերը որպէս հասուցում: Ուրբանիոյ նախագահ Վոլոտիմիր Զելենսքի ստիպուեցաւ զիջում կատարել ու խոստացաւ ստորագրել այդ պարտքի հասուցումի համաձայնագիրը, միս կողմէ սակայն կ'ուզէ յաւելեալ երաշխիք իր երկրի ապահովութեան համար: Այս հարցին շուրջ տեղի կ'ունենան բանակացութիւններ ԱՄՆ-ի եւ Ռուսիոյ միջեւ: Միև կողմէ, Շինաստան սկսաւ մտահոգուիլ, թէ պատերազմի աւարտեն ետք Ռուսիա կրնայ հեռանալ իրենց միջեւ եղող ռազմավարական համաձայնագիրեն, զիրենք ծգելով առանձին ԱՄՆ-ի դէմ տնտեսական ու քաղաքական կշիռի համար մղուած ճակատումին մէջ: Յարդ յայտնի չէ թէ որ չափով պիտի յաջողի ԱՄՆ իր քաղաքականութեան մէջ համաձայնեցնելու համար կրուող կողմերը Ուրբանիոյ մէջ: Միև կողմէ, Երոպական Միութեան անդամ երկիրներ Ֆրանսա եւ Գերմանիա ու Միացեալ Թագաւորութիւն դէմ են ԱՄՆ-ի վարած քաղաքականութեան ու կը փորձեն օգնել Զելենսքին դէմ դնելու համար Ռուսիոյ իրենց միջոցներով: Անոնք կը հասատատեն, թէ լստ իրենց, ԱՄՆ վստահելի դաշնակից չէ յետայսու իր վարած գործնական քաղաքականութեան պատճառով: Այսինքն, ինչպէս կը նկատենք համաշխարհային քաղաքականութեան մէջ կ'երեւին քառու նշաններ իրենց ժխտական հետեւանքներով: Եթէ Երոպայի երկիրներ բանակ մտցնեն Ուրբանիա կամ օդային սահմանները փակեն, այդ պիտի ըլլայ սկիզբը Գ.Համաշխարհային պատերազմին: Որքան իրաւացի էր դանիացի մեծ քաղաքական տեսաբան Կեորկ Սորբնալն երբ տարիներ առաջ կը յայտարարէր, թէ Երոպա կորսնցուցած է իր լաւ դեկավարներ ընտրելու առիթը ու իշխանութեան հասած են ոչ-հեռատես քաղաքական գործիչներ: Աշխարհ կը դիմագրաւէ քազմաբեւու քաղաքական համակարգի մը, որուն հաստատումը արդէն պէտք է հաւասարակշուրթիւն մտցնելու համար: Նախկին համակարգը պէտք է փոխարինուի նոր, մարդակեղրոն համակարգով մը: Սակայն, ե՞րբ ու ինչպէ՞ս: Ասոնք են հիմնական հարցումները:

## Յեղապաշտութիւնը որպէս լուծո՞ւ

Ամերիկացի մեծ տնտեսագէտ Ռիչրդ Վոլֆ շատ դիպուկ ձեւով կը նկարագրէ պետութեան մը մէջ ցեղապաշտական (fascist) կուսակցութեան մը իշխանութեան հասնելու պայմանները: Ուրեմն, եթի իշխանութեան վրայ գտնուող կուսակցութիւնը չի կրնար լուծել երկրի դիմագրաւած տնտեսական տազեապը, ընդդիմադիր կուսակցութիւններն ալ չունին տրամաբանական լուծում, բնակչութիւնը կը սկսի ուղղուիլ դէպի ամբոխավարական (populist) կամ ցեղապաշտական հոսանքները որպէս լուծում թերող ուժեր: Այսպէս, «Վեյմար»ի Գերմանիոյ մէջ մեծ չափի հասած դրամանիշի արժեզրկումը Ա.Համաշխարհային պատերազմէն եւր առիթ տուաւ ցեղապաշտ Ասոլֆ Հիրլերին հասնելու իշխանութեան: Հետեւանք բոլորին լայտին է որպէս Բ.Համաշխարհային պատերազմի

# ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

## (ՄԵԾ Պահբի Առթիւ)

ՎԵՐ. ԴՈԿ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԵԿՅԱՆ

«Երեւ խոստովանմանը մեր մեղքերը, վատահ եղէք՝ թէ Ասսուած, որ արդար է, այսի ներէ մեր մեղքերը» (Ա. Ցովի. 1. 9):

Պլեզ Փասբալ, ժէ դարու Ֆրանսացի նշանաւոր իմաստասերը, իր գործերէն մէկուն մէջ կը գրէ. «Աշխարհի մէջ երկու տեսակ մարդիկ կան—արդար մարդիկ, որոնք կը հաւատան թէ մեղաւոր են, եւ մեղաւոր մարդիկ, որոնք կը հաւատան թէ արդար են»:

Մարդոց մեծամասնութիւնը այս երկրորդ դասակարգին կը պատկանի: Ըստ մարդիկ կը հաւատան թէ իրենք արդար են, քանի որ Տասնարանեայի պատուիրանները կը պահեն, բարոյական գիտակցութիւն ունին բարին եւ չարը զանազանելու եւ իրենց կարողութեան չափով կը յարին բարին: Անոնք կը մոռնան, կամ կ'աշխատին մտահան ընել Պօլոս Առաքեալի վկայութիւնը. «Քոյլոր մարդիկ մեղանչեցին» (Հոռվ. 3. 23): Ցովհաննէս Առաքեալն ալ կը հաստատէ այս ճշմարտութիւնը երբ կը գրէ. «Երեւ ըսենք՝ մեղք չունինք մենք կը խարենք» ... եւ երեւ «մեղք զգործեցինք» ըսենք, ստախոս կը հանենք Ասսուած» (Ա. Ցովի. 1. 8, 10):

Ասսուածոյ հետ հաշտուելու եւ Քրիստոսի միջոցով Անոր թերած փրկութեան արժանանալու նախապայմանն է մեղքերու խոստովանութիւնը: Բայց ի՞նչ է ճշմարիտ եւ լի-իրաւ խոստովանութիւնը: Խոստովանութիւններու տեսակները կան: «Ես մեղանչեցի» ըսել բարական չէ լի-իրաւ խոստովանութեան համար: Օրինակներով խօսինք.-

Ա. Խոստովանութիւններ կան, որոնք շահախոյ (expedient) են: Երբեմն մարդիկ երբ ճարահատ դառնան «մեղայ» կ'ըսեն շահախտական նպատակներով: «Կ'ընդունինք որ մեղաւոր ենք» կ'ըսեն որպէս զի փախուստ տան աւելի խիստ դատավճիռ: Դատարաններու մէջ երբեմն քրեական ոճիր գործող «ոռքագործներ լալով «մեղայ» կ'ըսեն, բայց իրականութեան մէջ լուրջ զգումի հոգի չունին: «Սեղաւոր եմ» կ'ըսեն, որպէս զի դատաւորներու եւ դատական աստեանի բարեացալամուրինը շահին:

Եղիպտոսի Փարաւոնը երբ մերժեց արձակել Խորայելացիները, Ասսուած իրերայաջորդ պատուհաններու դրկեց Եղիպտոսի: Փարաւոն շուտով կանչեց Մովսէս ու Ահարոնը եւ ըսաւ անոնց. «Զեր Տէր Ասսուածյն ու ձեզի դէմ մեղանչեցի» (Ելց 10. 16): Որոշապէս, ասիկա կեղծ խոստովանութիւնն ընըն էր:

Բ. Խոստովանութիւններ կան, որոնք ակներեն են, մանաւանդ երբ մեղապարտ իր յանցանքն ու մեղքը գործած ասեն բռնուած է: «Այո՛, մեղաւոր եմ» ըսել բնական է, որպիտենտ ոճիրը անհերքելի է: Մեղապարտ որիշ հնարք չունի երեւ ոչ ըսել «մեղք գործեցի»: Հին Ուխտի մէջ Աքարի խոստովանութիւնը ասոր մէկ օրինակն է: Հակառակ Ասսուածոյ պատուիրին աւարի ընթացքին գործութիւն կ'ընէ եւ կը բռնուի, Յեսուին առջեւ Աքար կը խոստովանի ըսելով. «Ճիրավի, ես Խորայելի Տէր Ասսուածյն դէմ մեղք գործեցի» (Յեսուայ. 7. 20): Գործուած ոճիրը անհերքելի եւ անուրանալի էր, զայն ընդունիլը բարական չէր, առանց ապաշխարութեան գործընթացքին:

Գ. Խոստովանութիւններ ալ կան, որոնք մարդոց գործած մեղքերն ու յանցանքները կ'աշխատին շքնելացնել եւ զանոնք ուրիշն վրայ բեղցնել: Ասոր դասական օրինակներէն մին Աղամի անհնազանդութեան մեղքն է Եղեմի Պարտէզին մէջ: Երբ Ասսուած հարցուց իրեն. «Արդեօք կերա՞ այս ծառէն՝ որուն համար թեզի պատուիրեցի, որ անկէ չուտես»: Աղամ ըսաւ. «Այն կինը, որ ինձի հետ ըլլաւու տուիր, ան ինձի տուաւ ծառէն ու ես կերայ» (Ծննդոց 3. 11-12):

Դ. Ուրիշ խոստովանութիւններ ալ կան, որոնք մարդոց գործած մեղքերն ու յանցանքները կ'աշխատին շքնելացնել եւ զանոնք ուրիշն վրայ բեղցնել: Ասոր դասական օրինակներէն մին Աղամի անհնազանդութեան մեղքն է Եղեմի Պարտէզին մէջ: Երբ Ասսուած հարցուց իրեն. «Արդեօք կերա՞ այս ծառէն՝ որուն համար թեզի պատուիրեցի, որ անկէ չուտես»: Աղամ ըսաւ. «Այն կինը, որ ինձի հետ ըլլաւու տուիր, ան ինձի տուաւ ծառէն ու ես կերայ» (Պատ. 27. 4):

Չի բաւեր միայն «մեղայ» կամ «մեղք գործեցի» ըսելը: Ասիկա ճշմարիտ խոստովանութիւն մը չէ: Ճշմարիտ, լի-իրաւ խոստովանութիւն մը ոչ միայն մեղքի ճանաչումը կ'ընէ, այլ կոտրած սրտով՝ մեղքեր ներող Փրկիշին կը դիմէ: իր գործած մեղքին ներումին համար: Ճշմարիտ խոստովանութիւնը ապաշխարութեան նախարուուն է, որպէս մեղաւոր մարդը կը մտնէ եւ իր մեղքերը Քրիստոսի շնորհած զահին առջեւ կը դնէ եւ իր կեանքի ընթացքը կը փոխէ եւ լինանուի իր Փրկիշ Յիշու Քրիստոսի:

Ճշմարիտ եւ լիիրաւ խոստովանութեան շատ օրինակներ կան Ասսուածաշոնչ Մատեանին մէջ: Յիշենք անոնցն: Երկու յատկանշական օրինակներէն մին՝ Հին Ուխտէն, եւ միաւը՝ Նոր Կոտակարանէն: Առաջինը, Դաւիթ Թագաւորի կեանքէն: Դաւիթ Հին Խորայելի մեծագոյն բազաւորն էր, մէկը, որ Ս. Գիրը կը նկարագրէ, «Տիրոջ սրտին համեմատ մարդ մը» (Ա. Թագ. 13. 14), այսուհանդեր այս մարդը իր մարմնի ցանկութեան պատճառով սպաննել տուաւ Ուրիան՝ որպէսի անոր կնու Քերսաքի հետ ամուսնանայ: Երբ Նարան մարգարէն Դաւիթի ծածկաբար գործած ոճիրը բաջարար յայտնեց, Դաւիթ Նարանին ըսաւ. «Տիրոջ դէմ մեղք գործեցի» (Պ. Թագ. 12.13): Բայց այդ խոստովանութիւններն զատ զգումով եւ ապաշխարութեան անկեղծ հոգիով ի խորոց սրտի աղերսեց Ասսուածոյ. «Քեզի՛, Քեզի դէմ մեղանչեցի եւ քո աշքերուու առջեւ շարութիւն ըրի... իմ անօրենութիւնս զնջէ եւ իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ» (Սահմու. 51. 4, 10):

Ճշմարիտ եւ լիիրաւ ուրիշ գեղեցիկ օրինակ մըն է Նոր Կոտակարանի մէջ Յիշուի պատմած Անառակ Որդիին Առակը, որ արձանագրուած է Դուկաս Աւետարանի 15-րդ գիշուն մէջ: Անառակ Որդին իր հօրենական ժառանգութիւնը առնելէ ետք, մսիսց զայն՝ շուայտ կեանք մը վարելով: Բարդյակէս սնանկացած մարդը երբ նիրավակւ ալ այնչափ սնանկացաւ, որ խոզերուն կերած եղջիւներէն իր փորը կը լեցնէր, «փնքինքին զալով» իր հօրը տունը վերադարձաւ եւ խոստովանեցաւ իր մեղքը ըսելով. «Հայր, մեղանչեցի երկնիքի դիմ ու քու առջեւ եւ արժանի շնէ քու ողբիր ըստելու» (Դուկ. 15. 21): Եր հայրը զինքը ընթացնեց գրկարաց, որպիտենտ հայրը գիտէր թէ անոր խոստովանութիւնը ճշմարիտ էր, զինք առաջնորդած էր իր հօրը տունը զալու: Ճշմարիտ խոստովանութիւնը սկիզբն է ապաշխարութեան:

## ՄԵՐ «ԴԱՅՆԱԿԻՑ» ՌՈՒՍԱԿԱՆ ՇԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՎԱԿԱՆ ՎՐԱՎՈՐՈՎՈՒԹԵԱՆ ԵՐԱԾԽԱՎԻՐ ԵՐԷԿ, ԱՅՍՈՐ ԵՒ ՎԱՂԼ

ԱՌՈՍ ԶՆԵԱԶԵԱՆ

Միտերանտական օրագիր թերթի խմբագիր

Մարտ 16-ին, կը լրանայ 1921 թուականի Մոսկուայի ռուս-քրբական դաշնագրի ստորագրման տարեդարձը: Այս դաշնագրի դրամագիրը, որ կնքուեցաւ Ռուսաստան Ֆեռնանդային Ֆետերատիվ Սոցիալիստական Հանրապետութեան (ՌԽՖՍՀ) եւ Թուրքիյի միջեւ, Հայաստանի համար եղան ծանր գործութիւնը կը արդարացներէն Աստրավական ամրագնելու իրենց վերահսկութեան վերաբարեւութիւնը: Այս դաշնագրի միջնական ապահովութեան մէջ է դաշնամական իրավանութեան՝ Ռուսաստանի շահերը միշտ առաջին տեղը կը գրաւեն, մինչ հայկական շահերը երկրորդական կը մնան կամ նոյնիսկ անտեսուած պատմական տարածքներուն վրայ:

Հայաստանը, որ տարիներ շարունակ յենուած էր Ռուսաստանի դաշնագրութեան ապահովութեան հիմնական բարականութեան՝ Ռուսաստանի շահերը միշտ առաջին տեղը կը գրաւեն: Այս դաշնամական կարպել է ըսել՝ երկուքը միասին վերցուած:



1921 թուականի Մոսկուայի դաշնագրով՝ Ռուսաստան եւ Թուրքիա համաձայնեցան, որ Կարսի մարզը, Սուրմալան (ուր կը գտնուի Արարատ լեռը), ինչպէս նաև Նախիջենանը դուրս պիտի մնան Հայաստանի վերահսկութեան: Այն ժամանակ Խորհրդային Ռուսաստանը կը ձգտէր բարեկամութեան Թուրքիյի հետ, ուստի Հայաստանի շահերը գրաբերուեցան աւելի մեծ աշխարհապահան հաշուարկութիւնը մէջ:

Այսօր բազմարի պատմաբաններու այդ դաշնագրի վրա կը համարեն ակնյայտ դաշնամականութիւն Հայաստանի նկատմամբ, սակայն, ինչպէս կը տեսնենք, նոյն քաղաքանութիւնը կը շարունակուի նաև մեր օրերուն:

1990-ական թուական կարողաց ապահովութեան, երբ Հայաստան կարողացաւ յաղաքանակ տանի Արցախի առաջին պատերազմին, Ռուսաստանը չէր խոշնրութեան հայկական գօրքերու գործողութիւնները, սակայն 2020-ին, երբ Աստրավելան՝ Թուրքիյի աջակցութեամբ, յայնածառաւ յարձակում սկսաւ Արցախի վրայ, Ռուսաստանը «Հնկատեց» իր դաշնակից Հայաստանի դժուար կացո

# ՊԱՏՄԱԲԱՆ ԶԱՒԾ ՄԱԾՐԼԵԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ՀԱՄԱՐ» ԱՆԳԼԵՐԻՆ ՀԱՏՈՐԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

Պատմաբան Զաւէն Մսրբեան մագիստրոսական տիտղոսով աւարտելէ ետք Պէյրուի Ամերիկեան Համալսարանի Պատմութեան ճիշդ՝ մասնազիտանալով Միջին Արևելքի պատմութեան մէջ, իր դրկտորականը ստացած է Անգլիոյ մէջ: Ան իր ասպարէզին սկսած է հետաքրքրութիւն և ուսումնասիրել Հայաստանի պատմութեան եւ Հայոց Յեղասպանութեան մասին գիրքը, ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, հայերէն ու օտար լեզուներով եւ ուր որ տեղեկութիւններու սխալներ նշանառած է, մատնաշած է զանոնք եւ անմիջապէս հեղինակներու, խմբագիրներու եւ հրատարակիչներու նամակներ յղած է լուսաբանութեան համար: Այս ժիրմն մէջ ան 1972-ին ուսումնասիրած է «Բրիտանական Համարային Վաւերագրութեանց Գրասենեակ» (British Public Record Office) արխիվները, ուր տեսած է նամակներ ուղղուած կառավարական պատասխանատուններու, որոնց վրայ արձանագրուած են Բրիտանիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան (Foreign Office) կողմէ: Աշումներ եւ ակնարկութիւններ, որոնց կարենութեան անդրադարձ է հեղինակը:



Այս ուղղութեամբ յարատեն աշխատանքի իրեն արդինք պատմաբան Զաւէն Մսրբեան իր հաւաքած տեղեկութիւնները եւ կատարած լուսաբանութիւնները ի մի բերելով լոյս ընծայած է անզերէն լեզուով «Հայկական Հարցին Համար» (For The Armenian Cause) խորագիրով հատորը. Սիփան Հրատարակատուն, Պէյրու, 2023, 183 էջ:

2 Յունուար 1967-ին ամերիկեան «Նիուուիք» շաբարքերին մէջ անսուրագիր յօդուած մը հրատարակուած է՝ Խորհրդային Միջազգային Համարական պատմական առիրութեան առջևութեան հեղինակը փափաք կը յայտնէ վերջին 250 տարիներու ընթացքին թուրքից եւ Ռուսաստանի միջեւ յաճախակի պատերազմներուն վերջ դնել եւ շրջանին մէջ խաղաղ ապրիլ: Ան նաեւ կը յիշէ Ստամբուլի պահանջըք՝ Տարտանելի եւ Վուֆորի մէջ Խորհրդային Միջութեան բաժին պահովելը: Սակայն ոչ մէկ ակնարկութիւն կայ հոյն հայոց բռնագրաւեալ հողերուն մասին: Թուրքից փափաք կայ հոյն հայոց բռնագրաւեալ հողերուն մասին: Այս մասին մասնական առաջարկը կը ներկայացներ իրավունքութիւնը և այս առաջարկը կը գործադրուի մէջ կը դնենք անդամականութեան մասին:

Դոկտ. Զաւէն Մսրբեան «Նիուուիք» նամակ մը կուրդէ ու հետեւեալը կը շեշտէ հոյն. «Խորհրդային Միջութեանը իրաւունք չունի թուրքիան հաւատադիմնելու անոր հողերու ամրողականութեան մասին, այնքան ատեն որ հայկական հարց գոյութիւն ունի եւ հայոց հողերը բռնագրաւուած են»:

Դոկտ. Զաւէն Մսրբեանի տոյն նամակը «Նիուուիք» իր 23 Յունուար 1967-ի թիւվ կը հրատարակէ, անոր բաւական կարեւորութիւն տալով: Աւելին՝ հրատարակուած նամակին քով կ'երեւայ փափաք կայ հոյն հայութեան մասին է: Այս մասին մէջ աղմուկ եւ հետաքրքրութիւն կը յառաջացնէ ամենութեք: Թրքական թերթը ու լրատուական միջոցներ ալ կ'անդրադանան այս հարցին եւ նամակին, սակայն ինչպէս սպասելի է բացառականորեն:

Դոկտ. Զաւէն Մսրբեանի տոյն նամակը ամրողութեամբ կ'երեւայ այս հասորի էջ 8-ին վրայ: Սոյն նամակը այդ օրերուն հայերէնի բարզմանուերով կը հրատարակուի Պէյրուի «Զարթօնք» եւ «Ազրակ» օրաթերթուն մէջ: Այս հարցը մեծ աղմուկ եւ հետաքրքրութիւն կը յառաջացնէ ամենութեք: Թրքական թերթը ու լրատուական միջոցներ ալ կ'անդրադանան այս հարցին եւ նամակին, սակայն ինչպէս սպասելի է բացառականորեն:

Գիրքին «Հայաստան՝ Դժուարին Երազ» խորագիրով հասուածին մէջ, Դոկտ. Զաւէն Մսրբեան նոյն խորագիրով ամերիկացի թղթակից եւ վերլուծարան նայմքն ու. Քոփիի յօդուածը կը ներկայացնէ, որ Հայաստանի, Հայոց եւ Հայասպանութեան մասին է: Թրքական Քոփի 1971-ին Պէյրու այցելութեան ընթացքին քաղաքին պատերուն վկայ կը նշանառ որմազներու, որոնց նիւթին ու բռվանդակութիւնը Հայաստան է, ինչպէս նաեւ դատապարտում եղենագործ թուրքին: Որմազներուն վրայ գրուած են՝ «Ազատ Հայաստան», «Պատժեցէք թուրք Ոճրագործները» եւ «Վերադարձուք Հայկական Հողերը», որոնք մեզի կը յիշեցնեն 20-րդ դարու մեծագոյն ողբերգութիւնը՝ Հայաստանութիւնը:

Քոփիի յօդուածը կը նշէ հայոց պատմութեամբ դրուագներ եւ տեղեկութիւններ, նաեւ այդ օրերու աշխարհի վրայ տարածուած հայկական գաղութերու եւ Խորհրդային Հայաստանի բնակչութեան թիւերը: Յօդուածին մէջ կը զբանաբան հայկական կուսակցութիւններու մասին տեղեկութիւններ, ինչպէս նաեւ հայկական մամուլի օրկաններուն մասին տուեալներ:

Ուայմնու Ո. Քոփի Պէյրուի մէջ հարցազրոյց ունեցած է Դոկտ. Զաւէն Մսրբեանի հետ, որմէ տոյն յօդուածին մէջ կը մէջքերէ Դոկտ. Զաւէն Մսրբեանի խօսքերէն, որոնք ցոյց կու տան անոր հաստատ կեցուածքը Հայկական հարցին հողային դատ ըլլալուն եւ պահանջատիրութեան նկատմամբ:

1967-ին ԱԱԿ-ի «Տնտեսական եւ Ընկերային Խորհուրդ» իր հեղինակութեան տակ գործող «Մարդու Իրաւունքներու Յանձնախումբէն» կը պահանջէ ցեղասպանութեան շուրջ նոր ուսումնասիրութիւնն ու կատարել, նկատի առնելով որ 1948-ի ցեղասպանութեան պայմանադրութիւնը ժամանակավոր դարձած էր: Զանազան մասնագիտներ գործի կ'անցնին եւ քանի մը տարի աշխատել ու դոկտ. Զաւէն Մսրբեանի բարեօնուտ եռամդուն գործուներիւն ու իմաստուն միջամտութենէ եռք, կը յաջողուի յարմար բանածեն մը զտնել: Մսրբեան նամակագրութեամբ կը միջամտէ խորհուրդ տալով եւ լուսաբանութիւններ

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻԿԱՎԱԾԱԾԵԱՆ

Կատարելով: Այսպիսով Բանաձեի ամբողջութեան վրայ կ'աւելնայ 30-րդ պարբերութիւնը:

Պէյրու հրատարակուող «Երիտասարդ Հայ» երկարաբարերը իր 1 Դեկտեմբեր 1973 բուակիր համարին մէջ այս մասին կը գրէ. «Այս բոլոր աշխատանքներն եւ անկարելի է չունենալ տխուր մտածում մը, անձ մը, յամառ հետապնդումներով, յաջողեցաւ հոյն ուր կազմակերպութիւններու առաջնորդները, որոնք հայ ազգին ճակատագրութիւն ունենալու համար կ'աշխատին: Պրն. Զաւէն Մսրբեանի գործը փաստ մըն է որ կարելի է յաջողութեան հասնիլ անպայման: Պարզապէս կարեւոր է գիտնալ միջոցներն ու անապարհ...» (էջ 46):

ԱԱԿ-ի «Յեղասպանութեան Ոճքը Պատմելու Եւ Կանխարգիկելու Ուսումնասիրութեան» 30-րդ պարբերութեան հաստատման ջամփերուն ու նուանուն աշխատանքներուն մէջ եւս նկատանելի է պատմաբան Զաւէն Մսրբեանի ներկայութիւնը՝ նամակագրութիւններով, որոնց միջոցաւ ականական կ'ընէ: Այս մասին մանրամասնութիւններ տրուած են հեղինակին կողմէ: Հաջողութեան համար կ'ընէ: ՌԱՓԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ

The printing of this book has been funded by RAFFY MANOUKIAN

BEIRUT  
2023

2023

Պէյրու

**Movie Night**

TEKEYAN CULTURAL ASSOCIATION METRO LOS ANGELES CHAPTER  
AND THE ARMENIAN SCHOOLS OF EGYPT ALUMNI ASSOCIATION (KNB)  
INVITE YOU TO THE SCREENING OF "WE ARE EGYPTIAN ARMENIANS"

SUNDAY  
MARCH 30, 2025  
5:00 PM

Մեմբ սպասարակութիւն - Հայոց կայսրութիւն

Հայոց կայսրութիւն - Հայոց կայսրութիւն

We Are Egyptian ... Armenians

SPECIAL GUEST SPEAKER  
HIS EXCELLENCY ARMEN MELKONIAN  
FORMER AMBASSADOR OF THE REPUBLIC OF ARMENIA TO EGYPT

FREE ADMISSION - RECEPTION TO FOLLOW  
TEKEYAN CULTURAL ASSOCIATION BESHGETURIAN CENTER  
1981 N. ALLEN AVENUE, ALTADENA, CA 91001



**«ՄԻԱՅՆ ԹԱՏՐՈՒՄ ՊԱՐԱԳԱՅԻՆ ՀԵ, ԱՅԼ ԱՄԷՆ ԻՆՉԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐ ԱԵԽԱՐՀԵՎԿԱԼՈՒՄԸ ՊԵՏք Է ՓՈԽՈՒԻ...».**

# ԺԵՐԱՅՐ ԲԱԲԱԶԵԱՆ

## Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

Հայաստանի, Միացեալ Նահանգներու եւ Սերծաւոր Արևելքի մէջ այսօր-  
ւան Հայ քատրոնի եւ քատերական կեանքի մասին զրուցած եմ հանրայայտ  
դերասան եւ բեմադրիչ՝ Ժիրայր Բարագեանի հետ:

-Պր6. Բարագեան ի՞նչ վիճակի մէջ է այսօր հայկական քատրոնը:

Հաստիաբրդէտ հարցում մըն է այս. կրնամ ըսել ե՞ւ լաւ է, ե՞ւ գէշ վիճակի մը մէջ է մեր թատրոնը: Լաւ այս է, որ երիտասարդութիւն մը կայ, որ շատ խոստումնալից է, հակառակ որ «քատերական ինստիտուտ»ի, ուր ես կը դասաւանդեմ, դասախոսներէն ամէն օր զանգատներ կը լսեմ, որ «մերիններէն խերչայ, ծոյլ են, տղէտ են», եւ այլն, այնուամենայնի կան մարդիկ, որոնք այսօր կ'աւարտեն այնտեղէն եւ լաւ թատրոններու մէջ դերեր կը ստանձնեն: Ես այդ սերունդին համար է որ Հայաստան փոխադրուեցայ, իրականութեան մէջ. երբ



ինծի գործ առաջարկեցին, ըսի, որ 30-35 տարեկանէն վեր մարդոց հետ չեմ չեմ աշխատիր, այլ միայն անոնց հետ, որոնք Խորհրդային Սիրտիխնը չեն տեսած, որովհետեւ ես զիտեմ միւսները ինչ են, ի վերջոյ Երեւան ուսանած եմ հիմնգութարի: 1976-ին աւարտած եմ, այդ ժամանակ տեսայ, ապրեցայ, եւ երբ հեռացայ եւ աշխարհով մէկ սկսայ աշխատի, բնաւ միտք չունիի ես վերադառնալու այստեղ, հոս աշխատելու....: Յետոյ երբ Հայաստան անկախացաւ, ես արդէն Փարիզ հաստատուած եի եւ իմ ասպարէզս սկսած էր բարականին ծաղկիլ բայց Հայաստանէն բոլորովին չէի կտրուած: Հայաստան վերադարձս եղաւ բախտի բերմամբ, երբ 2016-ին Նիւ Ենրիք Թ.Ս.Ս.-ի բատերախումբին համար Յեղասպանութեան 100-ամեակին առթի Պերճ Զեյրունցեանի՝ Սոլոմոն Թեհիլիրեանի դատավարութեան մասին բատերախաղը («Ութիք՝ դատարանն է զալիս»ը -Խմբ.) բեմադրեցի: Այդ ներկայացումնով Երեւան եկանք, եւ այդու առիթով Համազգայինի պետական «Սոս Սարգսեան»ի անուան բատրունի տնօրինեն առաջարկ ստացայ: Ես ալ իրմէ բարական լաւ տպաւրուեցայ այդ ժամանակ, որովհետեւ երիտասարդը հազի 35 տարեկան էր եւ պետական բատրունի տնօրինն էր, «օրէնք»ով պիտի շատ աւելի մեծահասակ մէկը ըլլար, եւ այդ առթի ալ ըսի՝ կ'երեւի բան մը փոխուած է Հայաստանի մէջ, եւ իրօք, իր վերաբերմունքը, աշխատանքի ծեր բնաւ կապ չունիր սովետականութեան հետ: Ըսեմ նաեւ, որ ան երոպական, ամերիկեան մարդու նօտեցումները ունեցող, զործունեայ կերպար էր, եւ այդպէս ալ երիտասարդ դերասան, դերասանուիներու ծանօթացոց զիս: Այդ ժամանակ պետական օֆիերայի տնօրինը Կոնստանտին Օրբելիեանն ալ զիս Օփերա հրամիրեց, ծրագիր մը եղաւ 2018-ին, Տիգրան Չուխանեանի «Կարինէ»ն բեմադրեցի, եւ հոն ալ տարիիր հարցով նոյն բանը ըսի: Այդ ժամանակ որոշ երգիչներ, որոնք արդէն հաստատուած երգիչներ էին օփերային մէջ, բարական բոլորեցին, նոյնիսկ Օրբելիեանին ըսին, որ այս ինչ է, երիտասարդներ կը բերեն այստեղ, որոնք ձայն չունին, մեր օփերայի մեծ բեմին վայել չեն եւ այլն, եւ այդ ձայն չունեցողները, որոնց առաջին բեմին էր, այսօք արդէն հանաշխարհային ամենամեծ օփերաներուն մէջ կ'երգեն: Այդպէս սկսաւ իմ Երեւան հաստատուելու պարագաս, եւ դժգոհ չեմ, ամենէն հաճելի բաներէն մէկը «Մալեան բատրոն»ի տնօրինուի Նարինն Մալեանի խնդրանքն էր, որ իրենց համար փիկս մը բեմադրեմ՝ արեւմտահայերենով....: Երբ սկսայ աշխատի, անդրադարձայ թէ ինչ աստիճան դժուար բան էր արեւմտահայերենով բիւս մը պատրաստել, բայց եւ այնպէս դերասանները սորվեցան. ըսի որ մինչեւ «մարդավարի» չխօսիք այս լեզուն, բեմ ելլել չկայ: Երեք ամիս տեևեց փորձերը, եւ իիմա հանդիսատեսը զարմանքով կը հարցնէ թէ այս դերասանները հայաստանցիներ ե՞ն, թէ սփիտոքահայեր: Հիմա արդէն բատերական ինստիտուտին մէջն ալ տրամադրութիւն եւ ուղղութիւն կայ, որ ուսանողներուն համար արեւմտահայերէն գործեր բեմադրեմ: Շատ դժուար է, բայց կը սորվին, մանաւանդ՝ երիտասարդները:

-Դուք տարրելու տեղեր ապրած էք, այդ մնջ մնկապոլիսներէն ետք, Երեւանը ի՞նչ է ձեզի համար այսօր:

Երեւանը շատ նման է Փարիզին իր «քաֆէներ»ով, փողոցներով, ապրելակերպով եւ այլն, մարդիկ ուրախանալու համար փողոցները «կը թափին», ձզգտում մը կայ կեսանքէն հաճոյք ստանալու, օգտուելու, եւ այդ պատճառով ինք-զինքս տարբեր երկրի մէջ չեմ զգար: Ես Փարիզը շատ կը սիրեմ, այդ ժամանակ շատ մէծ դժուարութիւններէ անցայ, բայց անպայման ուզեցի Փարիզ ապրիլ, որովհետեւ ամէն ճենով կապուած էի՝ թէ՛ մշակութային գետնի վրայ, թէ՛ ամճնական զգացողութեամբ, նաև լեզուն լաւ զիտէի, որու շնորհի կարողացայ ֆրանսական թատրոնի մը մէջ խաղալ, եւ ոչ ոք կը կասկածէր որ ֆրանսացի չեմ: Հրաշալի փորձառութիւն էր:

-Ֆրանսայի մէջ շուրջ 300.000 հայութիւն ունինք, ինչո՞ւ Փարիզի մէջ յաջո-  
ղակ հայկական բատրոն չունինք:

